

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Թեմատիկ և դասի պլանավորման աշխատանքները որպես առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման միջոց:
Առարկա՝	ՆԶՊ
Ուսուցիչ՝	Սամվել Սարգսյան
Դպրոց՝	Աբովյանի Ն.Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց
Վերապատրաստող՝	Եղիշ Ներսիսյան

Բովանդակություն

Ներածություն.....	3
Թեմատիկ պլանավորման ձևերը և դրանց ազդեցությունը դասավանդման արդյունավետության բարձրացման գործում.....	4
Դասի պլանավորում.....	11
Եզրակացություն.....	16
Գրականություն.....	16

Ներածություն

Ուսումնական նյութը պլանավորելիս Նգպ առարկայի ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի, թե ներգործության ինչ միջոցներով է նպաստելու դպրոցականների նախնական զինվորական պատրաստվածության վիճակի բարելավմանը, ինչպիսի օգտակար սովորություններ և բարոյականային հատկանիշներ է արմատավորելու նրանց մեջ: Այդ նպատակով ուսուցիչը պետք է լավ պատկերացնի ծրագրային նյութի բովանդակությունը, առաջադրված խնդիրները և դրանց իրականացման համար հատկացված ժամաքանակը: Առարկայի չափորոշիչը և ծրագիրը իր ճկունության շնորհիվ ուսուցչին հնարավորություն են տալիս ստեղծագործաբար պլանավորելու ծրագրային նյութը՝ հաշվի առնելով ժամանակը, բնակլիմայական պայմանները, դպրոցի հնարավորությունները և աշակերտների նախասիրությունները: Ծրագրային նյութը ամբողջ ուսումնական տարվա վրա պետք է բաշխել այն հաշվով, որ նախատեսված ուսումնական նյութերը ամբողջովին ուսուցանվեն այդ ժամանակաշրջանում: Ուսումնական նյութի բաշխումը պետք է հիմնված լինի ծրագրային նյութի ուսուցումանն ապահովող որոշակի հաջորդականությամբ՝ տրամաբանական փոխադարձ կապի վրա:

Պլանավորման գործընթացում նորարարական մոտեցում կլինի նաև ինտեգրված դասերի և նախագծային ուսուցման ներառումը թեմատիկ պլանում:

Թեմատիկ պլանավորման ձևերը և դրանց ազդեցությունը դասավանդման արդյունավետության բարձրացման գործում

Ընդունված է, որ դպրոցը Նգպ առարկայի ուսումնական աշխատանքների կազմակերպման համար պետք է ունենա պլանավորման հետևյալ փաստաթղթերը.

- թեմատիկ պլանավորում ըստ կիսամյակների,
- դասի պլանավորում:

Թեմատիկ պլանավորումը կազմվում են ըստ կիսամյակների : Այստեղ ավելի է կոնկրետացվում որոշակի ժամանակամիջոցի համար կրթական, և դաստիարակչական խնդիրները:

Նգպ առարկայի և առհասարակ ցանկացած առարկայի թեմատիկ պլան կազմելու տարբեր մշակված տեսակներ կան, որոնցից օգտագործում ենք հետևյալ հիմնական տեսակները.

Ստորև օրինակում ցուցադրված թեմատիկ պլանավորման տեսակն առավելապես օգտագործվում է ֆիզկուլտուրա և Նգպ առարկաներից, որտեղ ուսուցիչը հստակ կարող է ներկայացնել յուրաքանչյուր դասի համարը, թեման, նպատակը, ինչպես նաև հեշտությամբ անցկացնել թեման¹ էլ. մատյան:

N	բովանդակություն	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34		
1	<u>ՀՀՁՈԼ համագործակցության արդու լուսններ</u>	3	n	ս			ս																														
2	1.2 ինծառայողի իրավունքներն ու ընդհանուր պարտականությունները:	3			n	ս		ս																													
3	2.2 ին վորական կարգապահության էությունը, խրախուսանքներ և կարգապահական տույժեր:	3							n	ս	ս																										
4	3.2 որամասի շուրջօրյա վերականգնող, ժամապահի պարտականությունները:	3																																			

¹ Նգպ առարկայի դասագրքեր 8-11 դասարաններ

Թեմա №	Թեմայի անվանում	Ժամերի քանակ
1	Ներածություն: ՀՀ սահմանադրությունը ՉՈՒ մասին :<<Չինապարտության մասին ՀՀ օրենքը:Դպրոցի ՆՁՊ ծրագիր:	ժամ
2	ՀՀ զինված ուժերի խնդիրները և կառուցվածքը:	ժամ
3	ՀՀ պետական խորհրդանշանները:	ժամ
4	Չորամասի մարտական դրոշը ,զինվորական երգում, բանակի երգը:	ժամ
5	Հայ զինվորական վարքականոնները:	ժամ
6	Ժամանակակից համազորային մարտ: Բնութագիրը , տեսակները,հիմնական սկզբունքները:	ժամ
7	Մարտական ապահովման տեսակները:մոտոհրաձգային ջոկի երթակարգը,նախամարտակարգը և մարտակարգը:	ժամ
8	Մոտոհրաձգային ջոկի կազմը և մարտական հնարավորությունները:	ժամ
9	Չինվորի գործողությունները մարտի ժամանակ: Չինվորը պաշտպանությունում և և հարձակման ժամանակ:	ժամ
10	Չինվորը որպես դիտորդ:	ժամ
11-15	Կրակային պատրաստություն:	ժամ
16-19	Ինքնաձիգի տեսակները ,դրանց մարտական հատկությունները ,հիմնական մասերը:Ինքնաձիգի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը:	ժամ
20	ՉՈՒ համազորային կանոնադրություններ: ՀՀ ՉՈՒ համազորային կանոնադրությունների գործառույթյան ոլորտները:Չինծառայողների իրավունքներն ու պարտականությունները:	ժամ
21	ՀՀ ՉՈՒ զինվորական կոչումներ:Տարբերանշաններ:Պետեր և ենթականեր:	ժամ
22	Չինվորական ողջույն :Հրաման և կարգադրություն:Ինչպես են դրանք տրվում:Պատասխանատվությունը ` չկատարելու դեպքում:	ժամ
23	ՀՀ ՉՈՒ զինվորական կոչումներ:Տարբերանշաններ:Պետեր և ենթականեր:	ժամ
24	Շարային պատրաստություն : Շարքերը և դրանց կառավարումը , շարքը և նրա բաղկացուցիչ տարրերը:Շարային կեցվածք :Չինվորի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում:	ժամ
25,26	Շարային վարժություններ:Շարային քայլք:Դարձումներ տեղում և շարժման ժամանակ:	1 ժամ
27	Ռազմական տեղագրություն : Տեղանքի տարատեսակները և մարտական հատկանիշները:Կողմնացույց:	ժամ
28	Կողմնորոշում տեղանքում առանց քարտեզի :Հորիզոնի կոմերի որոշումը կողմնացույցի, տեղի առարկաների,երկնային մարմինների միջոցով:	ժամ
29	Միջազգային մարդասիրական իրավունք: Էությունը, ընդհանուր դրույթներ:	ժամ
30	Մարտական գործողությունների վարման արգելված եղանակներն ու միջոցները:	ժամ
31	Անվտանգ կենսագործունեություն: Արտակարգ իրավիճակներ:	ժամ
32	Բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգ:	ժամ

33,34	Բնական բնույթի արտակարգ իրավիճակներ:Վարքի կանոններ	Ժամ

Այս տեսակի թեմատիկ պլանի օգտագործումը, թերևս, ամենատարածվածն է սակայն ներառում է իր մեջ միայն դասի թեմաների³ վերնագրերն ու ժամաքանակը: Կան նաև այլ ձևեր, որոնք այս երկու տեսակների համադրման արդյունք են կամ երկրորդ տեսակի թեմատիկ պլանի կատարելագործված ձևն է, որտեղ ավելացված են նպատակներ, վերջնարդյունքներ:

Դասի պլան

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում, մշակում է այն հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացում: Դասի պլանավորման խնդիրները դասից առաջ, դասի ընթացքում և դասից հետո տարբեր են:

Դասից առաջ ուսուցչին անհրաժեշտ է.

- ճշտել դասի թեման,
- հստակեցնել դասի նպատակները
- կատարել համապատասխան մեթոդների ընտրություն,
- նախապատրաստել ուսումնական նյութերը և միջավայրը,
- ճշտել գնահատման ձևերը,
- կատարել ժամանակի բաշխում:

Դասի բուն ընթացքը կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանրական սխեմայով.

- ներգրավիչ մաս
- հիմնական մաս
- եզրափակիչ մաս

Դասի մասերից յուրաքանչյուրը ունի իր նպատակը, խնդիրները և իրականացման միջոցները:

Տեսական դասերի ուսուցումը պլանավորվում է հետևյալ սխեմայով

Խթանման փուլ.

³ ՆՁՊ չափորոշիչ և ծրագիր

- սովորողների նախնական գիտելիքների պարզաբանում,
- ուղղորդող հարցեր, մտազրոհ:

Իմաստի ընկալման փուլ.

- ուսուցողական աջակցություն, սովորողի վերահսկվող աշխատանք,
- սովորողների ինքնուրույն և խմբային աշխատանքներ,
- տարաբնույթ հետազոտական աշխատանք:

Կշռադատման փուլ.

- աշխատանքի արդյունքների ներկայացում,
- քննարկում և ամփոփում:

Գնահատում

ՆՁՊ առարկայի դասերը անցկացվում են տվյալ դասարանի ծրագրային ուսումնական նյութի պլանավորման համաձայն: Նգպ առարկայի շատ դասեր գործնական են:

Նգպ առարկայի գործնական դասերը ունեն եռամաս կառուցվածք՝

ներգրավիչ մաս, հիմնական մաս, եզրափակիչ մաս:

Դասի այս մասերից յուրաքանչյուրը ունի իր նպատակը, խնդիրները և իրականացման միջոցները:

Ներգրավիչ մասում վճռվում են աշակերտներին կազմակերպելու և նրանց առաջիկա աշխատանքին նախապատրաստվելու խնդիրները: Ներգրավիչ մասի տևողությունը 10-15 րոպե է, այն հիմնականում օժանդակող դեր ունի և նախադրյալներ է ստեղծում հիմնական մասի ուսումնադաստիարակչական աշխատանքների համար: Դասի այս մասում ընտրված նյութը պետք է համապատասխանի հիմնական մասում առաջադրվող գործունեությունը: Ներգրավիչ մասի խնդիրներն են՝ աշխատանքի կազմակերպում, դասի խնդրի բացատրում, աշակերտների նախապատրաստում առաջիկա նյութին կամ վարժությունների կատարմանը:

Ջիմնական մասում, որի տևողությունը 25-30 րոպե է, վճռվում են կրթական և դաստիարակչական հիմնական խնդիրները:

Դասի հիմնական մասի խնդիրներն են՝

- նոր նյութի ուսուցում,
- անցած նյութի ամրապնդում,
- շարժողական ընդունակությունների մշակում,
- շարժողական հմտությունների յուրացում:

Հիմնական մասի բովանդակությունն է. պետական ծրագրով տվյալ դասարանի համար տրված ուսումնական նյութերի ուսուցումն ու ամրապնդումը:

Դասի հիմնական մասում, անհրաժեշտ է, որ ուսուցիչը ապահովի ուսումնական ծանրաբեռնվածության բարձր մակարդակ և օգտագործելով բոլոր պայմանները կարողանա հասնել ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Համեմատաբար բարդ խնդիրները, կապված նոր նյութի ուսուցման հետ լուծվում են դասի հիմնական մասի սկզբում: Այս դեպքում հաշվի է առնվում ուսուցման փուլը և պահպանվում խնդրի առաջադրման հետևյալ հաջորդականությունը՝ ծանոթացում, ուսուցում, ամրապնդում:

Դասի հիմնական մասի արդյունավետությունը կապված է ուսուցչի տվյալ դասին նախապատրաստվելուց՝ դասի պլան, գույքի նախապատրաստում, ուսուցման համապատասխան մեթոդների ընտրություն և այլն:

Եզրափակիչ մասում վճռվում են դասը կազմակերպված ավարտելու, հիմնական մասում ստացած ֆիզիկական բեռնվածությունից հետո աշակերտների օրգանիզմը համեմատաբար հանգիստ վիճակի բերելու խնդիրները: Այս մասում ամփոփվում է դասը, գնահատվում աշակերտների գործունեությունը, առաջադրվում տնային հանձնարարություններ: Եզրափակիչ մասի տևողությունն է 3-5 րոպե:

Դասի պլանները գրելիս՝ անհրաժեշտ հաշվի առնել դրա բնույթը, տարբերակել տեսական և գործնական դասերի կոնսպեկտները: Օրինակ՝

Տեսական դասի պլան.

Դասի պլանի «Անվտանգ կենսագործունեություն » բաժնից

ԴԱՍԻ ՊԼԱՆ «ԽԻԿ» համակարգով

Թեման՝ Անվտանգ կենսագործունեությունը դպրոցականների կյանքում

Նպատակը՝ Երեխաները տեղեկություններ կստանան անվտանգ կենսակերպի մասին

Կճևավորվի համագործակցային և փորձագիտական խմբերում աշխատելու հմտություններ:

Տևողությունը՝ 45 րոպ.

Մեթոդ՝ «Մտագրոհ», «Զիկսո»

Անհրաժեշտ պարագաներ՝ Բաշխիչ նյութ՝ 6 մասի բաժանված, գունավոր թղթեր՝ խմբերի բաժանման համար, A1 չափսի թղթեր, թանաքագրիչներ

Խթանում / 5 րոպ./ Մտագրոհի միջոցով վեր հանել երեխաների ունեցած գիտելիքները անվտանգ կենսագործունեության մասին, դրանք գրանցել գրատախտակին

Իմաստի ընկալում / 20 րոպ./ **1-քայլ**

Աշակերտներին բաժանել 4 խմբի՝ գունավոր թղթիկների միջոցով(սրանք մայր

Դասի մաս	Բովանդակություն	Չափ.	Մեթոդական ցուցումներ
----------	-----------------	------	----------------------

խմբերն են):

2-քայլ

Այնուհետև խմբերում հաշվել 1-4-ը: Նույնանման թիվ ունեցողները նստում են իրար հետ (սրանք ենթախմբերն են): Ենթախմբերին տալ համապատասխան տեքստեր: Տեքստերը ստանալուց հետո առաջարկել դրանք յուրացնել այնպես, որ մայր խումբ վերադառնալուց հետո, խմբի անդամներին կարողանան արդյունավետ սովորեցնել իրենց բաժին հասած նյութը: Կարդալու ընթացքում կարող են կատարել գրառումներ:

Կշռադատման փուլ /20 րոպե./

Երբ խմբի անդամները սովորում են ամբողջ տեքստը, ապա յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է ամբողջ նյութը կամ ուսուցչի որոշմամբ՝ տեքստի որևէ մասը(նյութի ներկայացումը կարող է լինել պաստառի միջոցով): Խմբերի մյուս մասնակիցները անհրաժեշտության դեպքում կարող են կատարել լրացումներ կամ պատասխանել այս կամ այն խմբի առաջադրած հարցերին: Զաջալերել բոլոր խմբերի աշխատանքները:

Գործնական դասի կոնսպեկտ.

Դասարանը՝9 .

Աշակերտների քանակը՝17, Դասի թեման՝ԿԻ ոչ լրիվ քանդում հավաքում
Դասի Նպատակը՝ամրապնդել ԿԻ ոչ լրիվ քանդում հավաքումը
Անհրաժեշտ գույք՝ Կալաշնիկովի ուսումնական ինքնաձիգ,վայրկենաչափ

Ներգ. մաս	Երկտողան շարք, գեկույց	2'	Ճակատային մեթոդ, Զետևել շարքերի հավասարությանը
	Անդրադարձ նախորդ դասին, հարցում	1'	Հարցման մեթոդ
	Անցում դասարանային դասի Նոր դասի խնդրի հաղորդում	1'	Զետևել շարքերի հավասարությանը և անաղմուկ անցմանը և իրենց տեղերի զբաղեցմանը:
Հիմն. մաս	Կի-ի ոչ լրիվ քանդման հավաքման ցուցադրում, արդյունավետ կատարման համար անհրաժեշտ հնարքների կիրառման վրա հատուկ շեշտադրություն:	5'	Խոսքի և գննական մեթոդների զուգակցում Զետևել, որ աշակերտները ուշադրությունը կենտրոնացնեն հատկապես տեխնիկապես դժվար կատարվող առանձին տարրերի ճշգրիտ կատարմանը
	Կի-ի ոչ լրիվ քանդում հավաքում ` առանց ընդհատումների, ըստ ջոկերի հերթականության: Նշել յուրաքանչյուր աշակերտի կատարման մասին դիտողությունները ` ջոկի կատարումից հետո:	31'	Հարահոս մեթոդ , Ուշադրություն դարձնել կատարման ժամանակին և տեխնիկապես դժվար կատարվող և ժամանակի վրա ազդող առանձին տարրերի ճշգրիտ կատարմանը: Վարժությունն ընդհատել միայն յուրաքանչյուր ջոկի կատարումից հետո :
Եզր. մաս	Ամփոփել դասը, Գնահատել	5'	Խոսքի մեթոդներ

Եզրակացություն

Նգպ առարկայի ուսուցման որակի բարձրացումը ՀՀ-ում միշտ եղել է հրամայական: Պատերազմի մշտական վտանգը ստիպում վաղ հասակից աշակերտներին տալ գիտելիքներ գինվորական պատրաստության մասին և գործնականում ծանոթացնել զենքին, գինամթերքին, դրա օգտագործման ձևին և անվտանգության կանոններին: Վերլուծելով չափորոշային պահանջներն ու ուսումնասիրելով դասագրքերը՝ ակնհայտ է դառնում, որ առարկային տրված սուղ ժամաքանակն արդյունավետ օգտագործելու համար առաջնային անհրաժեշտություն է ճիշտ պլանավորել ուսումնական նյութերը: Անհրաժեշտ է պլանավորման ժամանակ հաշվի առնել ոչ միայն կանխատեսելի խոչնդոտներ ու նպաստող հանգամանքներ, այլ նաև անհաղթահարելի ուժի առկայության պայմաններ: 2020 թվականի համավարակը և դրա ընթացքում տեղի ունեցած պատերազմը ստիպում են պլանավորման գործընթացների առավել արհեստավարժ իրականացում: Ուստի մանկավարժական բոլոր աշխատողների համար պետք է հրամայական լինի մշտապես կատարելագործել պլանավորելու կարողությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նգպ առարկայի դասագրքեր 8-11 դասարաններ
2. Նգպ առարկայի չափորոշիչ